

1992 ԹՎԱԿԱՆԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐԱՀՈՍՔԵՐԻ ԵՎ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՃԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՆ ԿԻՑ

ՋՐԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն արձանագրության կողմերը.

- **Գիտակցելով**, որ ջուրը անհրաժեշտ է կյանքի պահպանման համար և որ մարդկանց հիմնական պահանջները լիարժեք բավարարող քանակի և որակի ջրի մատչելիությունը մարդկանց առողջության բարելավման և կայուն զարգացման նախադրյալներից մեկն է,
- **Ընդունելով** մաքուր որակյալ ջրի և ներդաշնակ և պատշաճ գործող ջրային միջավայրի օգտակար դերը մարդու առողջության և բարեկեցության համար,
- **Տաշվի առնելով**, որ մակերեսային և ստորգետնյա ջրերը դրանց քանակի և որակի վրա մարդկային գործունեության անբարենպաստ ազդեցությանից վերականգնման սահմանափակ կարողությամբ վերականգնվող ռեսուրսներ են և համապատասխան սահմանափակումների չպահպանելը կարող է բերել անբարենպաստ կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքների այն մարդկանց առողջության և բարեկեցության համար, որոնք կախված են ռեսուրսների առկայությունից և որակից, և հետևաբար հիդրոլոգիական ցիկլի կայուն կառավարումը անհրաժեշտ է ինչպես մարդկանց կարիքների, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության համար,
- **Տաշվի առնելով** մարդու հիմնական պահանջները հոգալու համար անհրաժեշտ քանակի և որակի ջրի պակասի հետևանքները մարդկանց առողջության, հատկապես բնակչության սոցիալապես անապահով, խոցելի և օտարացված խմբերի համար,
- **Գիտակցելով**, որ ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելումը, հսկողությունը և նվազեցումն անհրաժեշտ ու կարևորագույն խնդիրներ են, որոնք կարող են բավարար կերպով լուծվել միայն բոլոր մակարդակներում և բոլոր

սեկտորների միջև սերտ համագործակցությամբ՝ ինչպես առանձին երկրներում, այնպես էլ պետությունների միջև,

- **Գիտակցելով նույնպես,** որ հսկողությունը և վաղաժամ հայտնաբերման և հակազդեցության համակարգի ստեղծումը հանդիսանում են այդ հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման կարևոր պայմաններ,
- **Ղեկավարվելով** շրջակա միջավայրի և զարգացման Միացյալ Ազգերի կազմակերպությունների կոնֆերանսի եզրակացություններով (Ռիո-դե-ժանեյրո, 1992թ.), մասնավորապես շրջակա միջավայրի և զարգացման Ռիո-դե-ժանեյրոյի դեկլարացիայով և XXI դարի Օրակարգով, նաև XXI դարի Օրակարգի հետագա իրականացման Ծրագրով (Նյու-Յորք 1997) և կայուն զարգացման և քաղցրահամ ջրերի կայուն կառավարման կոմիտեի հետագա որոշումով (Նյու-Յորք, 1998),
- **Ղեկավարվելով** միջազգային լճերի և միջսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին 1992թ. կոնվենցիայի համապատասխան դրոյթներով և ընդգծելով ինչպես այդ դրոյթները առավել լայնորեն կիրառելու, այնպես էլ կոնվենցիան բնակչության առողջության պահպանման միջոցառումներով լրացնելու անհրաժեշտությունը,
- **Նաև զգուշացնելով** միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին 1991թ կոնվենցիան, արտադրական վթարների միջսահմանային ազդեցության մասին 1992թ կոնվենցիան, միջազգային ջրահոսքերի ոչ նավարկության նպատակներով օգտագործման 1997թ կոնվենցիան և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին 1998թ կոնվենցիան,
- **Նաև զգուշացնելով նաև** շրջակա միջավայրի և առողջության 1989թ. Եվրոպական խարտիայի, «Շրջակա միջավայրը և առողջությունը» Նելսինյան դեկլարացիայի և «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» գործընթացի նախարարների դեկլարացիաների առաջարկությունների և որոշումների հիմնարար սկզբունքները, նպատակները և առաջարկությունները,

- **Ընդունելով** այլ էկոլոգիական նախաձեռնությունների, փաստաթղթերի և գործընթացների, ինչպես նաև շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում և շրջակա միջավայրի պահպանման գործողությունների ազգային ծրագրերի մշակման և իրականացման հիմնավորվածությունը ,
- **Բարձր գնահատելով** Միացյալ Ազգերի Կազմակերպության Եվրոպական Տնտեսական հանձնաժողովի և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական գրասենյակի կողմից ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման ուղղությամբ երկկողմանի և բազմակողմանի համագործակցության ամրապնդման հարցում արդեն ներդրվող ջանքերը,
- **Ոգեշնչվելով** Միացյալ Ազգերի Կազմակերպության Եվրոպական Տնտեսական հանձնաժողովի անդամ երկրներում և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային կոմիտեի անդամ երկրներում ջրային միջավայրի աղտոտման դեմ պայքարի, պահպանման և վերականգնման բնագավառում դրական արդյունքների բազմազան օրինակներով, ինչը նպաստում է մարդկանց առողջության բարելկեցության պահպանմանը,
- **Համաձայնվել են** ներքո հիշյալի վերաբերյալ.

## **Հողված 1**

### **ՆՊԱՏԱԿ**

Տվյալ արձանագրության նպատակն է բոլոր համապատասխան մակարդակներում՝ ազգային, նաև միջսահմանային և միջազգային համատեքստում նպաստել մարդու անհատական և հասարակական առողջության ու բարելկեցության պահպանմանը կայուն զարգացման շրջանակներում՝ ջրատնտեսական գործունեության, ջրային ռեսուրսների պահպանումը ներառյալ, կառավարման բարելավման ու ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, հսկման և նվազեցման միջոցով:

**Հոդված 2**  
**ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

**Սույն արձանագրության նպատակների համար՝**

1. **«Ջրի հետ կապված հիվանդություններ»**՝ մարդու առողջության համար ցանկացած էական բացասական հետևանքներ, ինչպիսիք են. մահը, հաշմանդամությունը, հիվանդությունը կամ խանգարումները, որոնք անմիջապես կամ միջնորդավորված առաջացել են ցանկացած ջրերի քանակի կամ որակի վիճակից կամ փոփոխությունից:
2. **«Լսելի ջուր»**՝ խմելու, սնունդ պատրաստելու կամ մշակելու, անձնական հիգիենայի կամ համանման նպատակներով օգտագործվող կամ նախատեսվող ջուր:
3. **«Ստորգետնյա ջուր»**՝ երկրի մակերևույթից ցածր գտնվող և ներծծման գոտիում հողի կամ ենթահողի հետ անմիջականորեն շփվող ցանկացած ջուր:
4. **«Պարփակված ջուր»**՝ քաղցրահամ կամ մերձափնյա ջրերից առանձնացված արհեստականորեն ստեղծված ջրամբարներ, ինչպես կառույցների ներսում, այնպես էլ կառույցներից դուրս:
5. **«Միջսահմանային ջուր»**՝ երկու կամ ավելի պետությունների սահմանները սահմանագծող, հատող կամ այդ սահմանների վրա գտնվող ցանկացած մակերևութային կամ ստորգետնյա ջուր: Անմիջապես ծով թափվելու դեպքում միջսահմանային ջրի սահմանը որոշվում է ափերին գտնվող ցածր ջրի կետերի միջև անց կացված ուղիղ գծով:
6. **«Ջրի հետ կապված հիվանդությունների միջսահմանային հետևանքներ»**՝ մեկ կողմի իրավասության տարածքում ի հայտ եկած մարդու առողջության վրա որևէ բացասական հետևանքներ, ինչպես մահ, հաշմանդամություն, հիվանդություններ կամ խանգարումներ, որոնք անմիջապես կամ միջնորդված առաջացել են այլ կողմի իրավասության տարածքում ջրի վիճակի կամ քանակի և որակի

փոփոխությունից, անկախ այդ հետևանքների միջսահմանային ազդեցություն լինելուց:

7. *«Միջսահմանային ազդեցություն»*. Կոնվենցիայի այս կամ այն կողմի իրավասության տակ գտնվող շրջակա միջավայրի վրա մարդու լրիվ կամ մասնակի մյուս կողմի իրավասության տակ ֆիզիկապես գտնվող գործունեության հետևանքով միջսահմանային ջրերի վիճակի փոփոխությունից առաջացած ցանկացած արտահայտված վնասակար հետևանք: Այդպիսի հետևանքներ են. ազդեցությունը մարդու առողջության և անվտանգության, բուսականության, կենդանական աշխարհի, հողի, օդի, ջրերի, կլիմայի, բնապատկերի, պատմական հուշարձանների կամ այլ նյութական կառույցների կամ այդ գործոնների փոխազդեցության վրա, այդ թվում նաև ազդեցություն մշակութային ժառանգության և սոցիալ-տնտեսական պայմանների վրա, որն առաջանում է այդ գործոնների փոփոխության հետևանքով:

8. *«Սահիտարականխարզելիչ միջոցառումներ»* կոլեկտիվ համակարգերի կամ առանձին տնատիրությունները կամ կազմակերպությունները սպասարկող սարքավորումների միջոցով մարդու կենսագործունեության թափոնների կամ կենցաղային կեղտաջրերի հավաքումը, տեղափոխումը, մշակումը և հեռացումը կամ կրկնակի օգտագործումը:

9. *«Կոլեկտիվ համակարգ»*.

ա) մի շարք տնատիրություններ կամ կազմակերպություններ խմելու ջրով մատակարարող համակարգ և/կամ,

բ) մի շարք տնատիրություններ կամ կազմակերպություններ սպասարկող սահիտարականխարզելիչ միջոցառումներ իրականացնող համակարգ, որն անհրաժեշտության դեպքում ապահովում է նաև արդյունաբերական կեղտաջրերի հավաքումը, տեղափոխումը կամ կրկնակի օգտագործումը և որի գործունեությունը ապահովվում է պետական սեկտորի մարմնով, մասնավոր սեկտորի կազմակերպամբ կամ այդ սեկտորների միջև համագործակցության միջոցով:

10. *«Ջրատնտեսական գործունեության կառավարման ծրագիր»*` տարածաշրջանում կամ ստորգետնյա ջրերի ներծծման գոտում կոնկրետ ջրառեսուրսների կամ օբյեկտների մշակման, կառավարման, պահպանման և/կամ օգտագործման, էկոհամակարգերի պահպանումը ներառյալ ծրագիր:

11. *«Հասարակայնություն»*` մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավական անձինք և, ազգային օրենքների կամ պրակտիկայի համաձայն, նրանց միություններ, կազմակերպություններ և խմբեր:

12. *«Պետական մարմին»*.

ա) ազգային, տարածքային և այլ մակարդակների վարչական մարմին,

բ) ազգային օրենսդրության համապատասխան պետական ադմինիստրատիվ գործառնություններ, ներառյալ շրջակա միջավայրի, հասարակական առողջության, սանիտարական խարզելիչ միջոցառումների, ջրատնտեսական գործունեության կառավարման կամ ջրամատակարարման բնագավառներին վերաբերվող կոնկրետ պարտականություններ, գործունեություն կամ ծառայություններ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք,

գ) ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են պետական պարտականություններ կամ գործառնություններ, կամ մատուցում են ծառայություններ վերը նշված «ա» և «բ» ենթակետերում թվարկված մարմինների կամ անձանց հսկողության ներքո,

դ) 21 հոդվածում նշված կողմ հանդիսացող ցանկացած տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման կազմակերպության հիմնարկություններ:

Այս սահմանումը չի ընդգրկում այն մարմինները կամ հիմնարկությունները, որոնք գործում են որպես դատական կամ օրենսդրական մարմիններ,

13. *«Տեղային»*` սահմանումը վերաբերվում է պետական մակարդակից ցածր բոլոր տարածքային միավորների համապատասխան մակարդակներին:

14. *«Կոնվենցիա»*` միջազգային լճերի և միջսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին կոնվենցիան, որն ընդունվել է Վելսինկիում, 1992թ. մարտի 17-ին:

15. «*Կոնվենցիայի Կողմերի Խորհրդակցություն*»՝ Կոնվենցիայի Կողմերով դրա 17-րդ հոդվածին համապատասխան սահմանված մարմին:
16. «*Կողմ*»՝ եթե տեքստում այլ բան չի նշվում, ապա պետություն կամ հոդված 21-ում նշված տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն, որի կողմից համաձայնություն է տրվել մասնակցելու սույն արձանագրությանը և որի համար սույն արձանագրությունը ուժի մեջ է ,
17. «*Կողմերի Խորհրդակցություն*». 16-րդ հոդվածին համաձայն Կողմերով սահմանված մարմին:

### Հոդված 3

#### ԿԻՐԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

##### Սույն արձանագրության դրույթները վերաբերվում են՝

- ա) մակերևութային քաղցրահամ ջրերին,
- բ) ստորգետնյա ջրերին,
- գ) գետաբերաններին,
- դ) ռեկրեացիոն կամ ձկնաբուծական նպատակով կամ ջրակուլտուրաների և խնցզետնաանմանների բուծելու և հավաքելու համար օգտագործվող մերձափնյա ջրերին,
- ե) լողանալու համար մատչելի պարփակված ջրերին,,
- զ) ջրերին՝ ջրառի, տեղափոխման, մաքրման և մատակարարման ընթացքում
- է) կեղտաջրերին՝ հավաքման, տեղափոխման, մաքրման և թափման կամ կրկնակի օգտագործման ընթացքում:

## Հոդված 4

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կողմերը պետք է ձեռնարկեն ջրի հետ կապված հիվանդությունների տարածման կանխարգելման, սահմանափակման և նվազեցման համար ջրատնտեսական գործունեության կառավարման համակարգի սահմաններում բոլոր համապատասխան միջոցները, որոնց նպատակն է ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը, մարդու առողջությանը չսպառնացող ջրի որակի ապահովումը և ջրային էկոհամակարգի պահպանումը:

2. Կողմերը, մասնավորապես, պետք է բոլոր համապատասխան միջոցները ձեռնարկեն ապահովելու համար

ա) միկրոօրգանիզմներ, մակաբույծներ և իրենց քանակի կամ կոնցենտրացիայի պատճառով մարդու առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող նյութեր չպարունակող բարձորակ խմելու ջրով բավականաչափ մատակարարումը: Դա պետք է ներառի որպես խմելու ջրի աղբյուր օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանումը, ջրի մաքրումը և կոլեկտիվ համակարգերի ստեղծումը, կատարելագործումը և շահագործումը,

բ) մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանման բավարար մակարդակը ապահովող ստանդարտին համապատասխանող սանիտարական խարգելիչ միջոցառումների իրականացումը: Դա մասնավորապես պետք է ապահովվի կոլեկտիվ համակարգերի ստեղծման, կատարելագործման և սպասարկման միջոցով,

գ) որպես խմելու ջրի աղբյուր օգտագործվող ջրային ռեսուրսների, ինչպես նաև նրանց էկոհամակարգերի, տարբեր պատճառներից, ներառյալ գյուղատնտեսության, արդյունաբերության և վնասակար նյութերի այլ արտանետումներով և արտահոսքերով աղտոտվելուց արդյունավետ պահպանումը: Այդ պետք է ուղղված լինի մարդու առողջության և ջրային էկոհամակարգերի համար վտանգավոր համարվող նյութերի արտանետումների արդյունավետ կրճատմանը և վերացմանը,

դ) ռեկրեացիոն, ջրակուլտուրաների, կակղամորթների և խնցզետնամանների բուծման նպատակով ջրի, ռոռզման նպատակով կեղտաջրի և գյուղատնտեսության և



ջրակուլտուրայի աճեցման նպատակով կենդանաբանական մշակման մնացորդների օգտագործման արդյունքում ջրի հետ կապված հիվանդություններից մարդու առողջությունը բավարար պահպանումը,

ե) ջրի հետ կապված հիվանդությունների դեպքերի կամ բռնկումների առաջացման պատճառ հանդիսացող իրավիճակների դիտարկման, այդպիսի դեպքերին և բռնկումներին և դրանց առաջանալու սպառնալիքին հակաազդման համակարգերի արդյունավետությունը ,

3. Այսուհետև սույն Արձանագրության մեջ «Խմելու ջուր» և «սանիտարական խարզելիչ միջոցառումներ» հիծատակելուիս պետք է հասկանալ սույն հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխանող խմելու ջուրը և սանիտարական խարզելիչ միջոցառումները,

4. Կողմերը ձեռնարկում են բոլոր այդ միջոցները հիմք ընդունելով ցանկացած առաջարկվող միջոցի հետևանքների ,առավելությունները և ծախսերը ներառյալ, գնահատումը

ա) մարդու առողջության,

բ) ջրային ռեսուրսների և

գ) կայուն զարգացման համար,

ինչի սահմաններում հաշվի են առնվում ցանկացած առաջարկվող միջոցի շրջակա միջավայրի տարբեր բնագավառների վրա ազդեցության նոր տեսակները:

5. Կողմերը իրականացնում են բոլոր համապատասխան գործողությունները՝ ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման նպատակով ջրատնտեսական գործունեության կառավարման բարելավման առկա հնարավորությունների իրականացմանը, ինչպես նաև պետական, մասնավոր և կամավոր սեկտորներից յուրաքանչյուրի այս գործում իր ներդրումն ունենալուն նպաստող կայուն իրավական, վարչական և տնտեսական պայմաններ ստեղծելու համար:

6. Կողմերը պահանջում են սույն Արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ցանկացած ջրային միջավայրի վրա հնարավոր էական ազդեցություն ունեցող միջոցներ ձեռնարկելու որոշում կայացնող կամ ուրիշ սուբյեկտների կողմից այդպիսի միջոցներ ձեռնարկելուն հավանություն տվող պետական մարմիններից լիարժեք կերպով հաշվի առնել մարդկանց առողջության վրա այդ միջոցների ցանկացած հնարավորին ազդեցությունը :
7. Եթե կողմը հանդիսանում է նաև միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի կողմ, ապա այդ կողմի պետական մարմինների կողմից նախատեսվող գործողության նկատմամբ այդ կոնվենցիայի պահանջների կատարումը պետք է բավարարի նաև սույն հոդվածի 6-րդ կետի պահանջներին:
8. Սույն Արձանագրության դրույթները չեն սահմանափակում Արձանագրությամբ սահմանվող միջոցներից ավելի խիստ միջոցներ իրականացնելու, ընդունելու կամ ներդնելու կողմերի իրավունքները:
9. Սույն Արձանագրության դրույթները չեն սահմանափակում Արձանագրության ցանկացած կողմի այլ կոնվենցիաներից կամ ցանկացած գործող միջազգային համաձայնություններից բխող իրավունքները և պարտականությունների կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Արձանագրությամբ նախատեսված պահանջները ավելի խիստ են, քան այլ կոնվենցիայով կամ գործող միջազգային համաձայնությամբ նախատեսվածները:

## **Հոդված 5**

### **ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

Սույն Արձանագրությունը իրականացնելու համար միջոցներ ձեռնարկելիս կողմերը պետք է առաջնորդվեն են մասնավորապես հետևյալ սկզբունքներով և մոտեցումներով.

ա) նախագգուշական միջոցներ ձեռնարկելու սկզբունքով, ըստ որի ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման միջոցները չպետք է հետաձգվեն այն պատճառով, որ գիտական հետազոտությունները լիարժեք չեն հաստատել պատճառահետևանքային կապը մեկ կողմից՝ այն գործոնի, որին ուղղված են այդ միջոցները, և մյուս կողմից՝ այդ գործոնի ջրի հետ կապված հիվանդությունների տարածման և/կամ դրա միջսահմանային ազդեցության վրա հնարավոր ներդրման միջև,

բ) «ադոտոտղը վճարում է» սկզբունքով, ըստ որի ադոտոտման կանխարգելման, սահմանափակման և նվազեցման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը պետք է հոգա ադոտոտղը,

գ) Միացյալ Ազգերի կազմակերպության կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն պետությունները ունեն իրենց սեփական ռեսուրսները շրջակա միջավայրի և զարգացման իրենց քաղաքականությանը համապատասխան շահագործելու ինքնիշխան իրավունք և իրենց իրավասության և հսկողության սահմաններում իրականացվող գործունեության ազգային իրավասության սահմաններից դուրս այլ պետությունների կամ շրջանների շրջակա միջավայրին չվնասելը ապահովելու պատասխանատվություն,

դ) ջրային ռեսուրսների կառավարումն պետք է իրականացվի է այնպես, որ ներկա սերունդի կարիքները բավարարվեն առանց ապագա սերունդների կարիքները բավարարելու հնարավորությունը վտանգի ենթարկելու,

ե) պետք է ձեռնարկվեն ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումները և դեպքերը կանխարգելելու և խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրային ռեսուրսները պահպանելու կանխարգելիչ միջոցներ, քանի որ այդպիսիք առավել նպատակաուղղված են վնասակար ազդեցություններին և կարող են լինել ավելի ծախսաարդյունավետ, քան դրոշմային շտկմանն ուղղված միջոցները,

զ) ջրային ռեսուրսների կառավարման միջոցները պետք է ձեռնարկվեն համապատասխան վարչական ամենաստորին մակարդակում,

է) ջուրը ունի սոցիալական, տնտեսական և բնապահպանական արժեք, այդ պատճառով ջրային ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովի այդ արժեքների առավել լավագույն ընդունելի և կայուն համակցումը,

ը) լրատվության մատչելիությունը և հասարակության մասնակցությունը ջրի և առողջության խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացին ի թիվս այլ միջոցների, անհրաժեշտ են ընդունվող որոշումների որակը բարձրացնելու, դրանց իրականացմանը նպաստելու, համապատասխան հարցերով հասարակության իրազեկությունը բարձրացնելու նպատակով, պետք է հնարավորություն ընձեռնվի հասարակությանը՝ արտահայտելու իր անհանգստությունը և պետական մարմիններին՝ հավուր պատշաճի հաշվի առնելու այդ անհանգստությունը: Այդպիսի մասնակցության հնարավորությունը պետք է լրացվի ընդունված որոշումների դատական և վարչական վերանայման մատչելիությամբ,

թ) սոցիալ-տնտեսական զարգացման և բնական էկոհամակարգերի պահպանման, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարումը շրջակա միջավայրի այլ գործոնների որակի կանոնակարգման վարչական միջոցների միջև սերտ կապ ապահովելու նպատակով ջրային ռեսուրսների կառավարումը, հնարավորության սահմաններում, պետք է իրականացվի ջրհավաք տարածքների հիման վրա: Այդպիսի համալիր մոտեցում պետք է ցուցաբերվի ջրհավաք տարածքի ողջ տարածքում, ներառյալ դրա հետ կապված մերձափնյա ջրերը, ստորգետնյա ջրերի ներծծման գոտին ամբողջությամբ կամ դրանց համապատասխան մասերը, անկախ այն փաստից, միջսահմանային դրանք , թե՛ ոչ,

ժ) հատուկ ուշադրություն պետք է դարձվի ջրի հետ կապված հիվանդություններից բնակչության առավել խոցելի խմբերին,

ի) պետք է ապահովվի բավարար քանակի և համապատասխան որակի ջրի հավասարաչափ մատչելիությունը հասարակության բոլոր անդամների, հատկապես անբարենպաստ վիճակում գտնվողների կամ սոցիալապես օտարեցվածների համար,

լ) մասնավոր և հանրային իրավունքով ամրագրված ջրի նկատմամբ իրենց իրավունքները և լիազորությունները իրականացնելիս ֆիզիկական և իրավական անձինք և կազմակերպությունները, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորում, որպես

պատասխան միջոց պետք է աջակցեն ջրային միջավայրի և ջրային ռեսուրսների պահպանմանը,

10. Սույն Արձանագրությունը իրականացնելիս պատշաճ կերպով պետք է հաշվի առնվեն տեղային խնդիրները, կարիքները և գիտելիքները:

## Հոդված 6

### ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀՍԿՈՂԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

1. Սույն Արձանագրության նպատակը իրականացնելու համար Արձանագրության կողմերը ձգտում են՝

ա) խմելու ջրի օգտագործման մատչելիությանը՝ բոլորի համար,

բ) սանիտարական խարզելիչ միջոցառումների իրականացմանը բոլորի համար՝ ջրատնտեսական գործունեության կառավարման համալիր համակարգերի սահմաններում՝ ուղղված ջրային ռեսուրսների կայուն օգտագործմանը, մարդու առողջությանը վտանգ չսպառնացող ջրի որակի ապահովմանը և ջրաէկոհամակարգերի պահպանմանը,

2. Այս նպատակներից ելնելով կողմերից յուրաքանչյուրը սահմանում և հրապարակում է ազգային և/կամ տեղային նպատակային ցուցանիշներ՝ այն չափաքանակների և արդյունավետության մակարդակների վերաբերյալ, որոնց պետք է հասնել կամ պահպանել ջրի հետ կապված հիվանդություններից բարձր մակարդակի պաշտպանվածություն ապահովելու համար: Այդ նպատակային ցուցանիշները պարբերաբար պետք է վերանայվեն: Միաժամանակ դրանք պետք է նախատեսեն թափանցիկ և արդար հիմունքներով հասարակայնության մասնակցության և դրա արդյունքների պատշաճ հաշվառումն ապահովող համապատասխան գործնական և/կամ ուրիշ միջոցներ: Այդ դեպքերից բացի, երբ ազգային կամ տեղային հանգամանքների բերումով դրանք պիտանի չեն ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման համար, նպատակային ցուցանիշները, ի թիվս այլոց, ընդգրկում են նաև.

ա) մատակարարվող խմելու ջրի որակը՝ հաշվի առնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության խմելու ջրի որակի հսկողության ուղեցույցը,

բ) ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների և դեպքերի նվազումը,

գ) այն տարածքի մակերեսը կամ բնակչության այն թվաքանակը կամ մասնաբաժինը, որը պետք է սպասարկվի խմելու ջրի մատակարարման կոլեկտիվ համակարգերով կամ որի խմելու ջրի մատակարարումը պետք է բարելավվի այլ միջոցներով,

դ) այն տարածքի մակերեսը կամ բնակչության այն թվաքանակը կամ մասնաբաժինը, որը պետք է սպասարկվի սանիտարական խարզելիչ միջոցների կոլեկտիվ համակարգերով կամ որի սանիտարական խարզելիչ միջոցների համակարգը պետք է բարելավվի այլ միջոցներով,

ե) արդյունավետության այն մակարդակները, որոնք պետք է հասնեն համապատասխանաբար ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների այդպիսի կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերը ,

զ) ճանաչված լավագույն պրակտիկայի կիրառումը ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների համակարգերի կառավարման բնագավառում, ներառյալ խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի պահպանումը,

է) արտահոսքի դեպքերը.

i) առանց մաքրման կնիտաջրերի և

ii) առանց մաքրման հեղնղային/անձրևային ջրերի հոսքերի կոյուղու համակարգերից դեպի սույն Արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերը,

ը) կնիտաջրերի մաքրման սարքավորումներից դեպի սույն Արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերը արտահոսող կնիտաջրերի որակը,

թ) սանիտարական խարզելիչ միջոցների կոլեկտիվ համակարգերից կամ այլ սանիտարական խարզելիչ սարքավորումներից կնիտաջրերի նստվածքի հեռացումը կամ

կրկնակի օգտագործումը և ոռոգման համար օգտագործվող կեղտաջրերի որակը՝ հաշվի առնելով Առողջապահության Համաշխարհային կազմակերպության և Միացյալ Ազգերի Շրջակա միջավայրի ծրագրի կեղտաջրերի և կենսագործունեության թափոնների գյուղատնտեսությունում և ջրային կուլտուրաներում անվտանգ օգտագործման ուղեցույցը ,

ժ) խմելու ջրի աղբյուր հանդիսացող, լողանալու համար օգտագործվող կամ ջրատնտեսության մեջ օգտագործվող, կակղամորթների և խեցզետնանմանների բուծման և հավաքելու համար օգտագործվող ջրերի որակը,

ի) ճանաչված լավագույն պրակտիկայի կիրառումը լողանալու համար պիտանի պարփակված ջրերի կառավարման գործում,

լ) սույն Արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրային ռեսուրսների և օբյեկտների վրա հնարավոր բացասական աղբյուրներն ունեցող և այդպիսով ջրի հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգի հնարավոր աղբյուր հանդիսացող հատկապես աղտոտված վայրերի հայտնաբերում և մաքրում,

կ) ջրային ռեսուրսների կառավարման, մշակման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը, ներառյալ բոլոր տեսակների աղբյուրներից աղտոտման նվազեցման հսկողության ճանաչված լավագույն պրակտիկայի կիրառումը,

ծ) հողված 7-ի 2-րդ կետով նախատեսված լրատվության հրապարակման միջև ընկած շրջանում մատակարարվող խմելու ջրի և վերը նշված նպատակային ցուցանիշներին վերաբերվող այլ ջրերի որակի մասին լրատվությունը հրապարակելու պարբերականությունը,

3. Արձանագրության կողմի կարգավիճակ ստանալուց հետո 2 տարվա ընթացքում յուրաքանչյուր կողմը սահմանում և հրատարակում է սույն հողվածի 2-րդ կետում շարադրված նպատակային ցուցանիշները, ինչպես նաև այդ ցուցանիշների կատարման ժամկետները:

4. Եթե նպատակային ցուցանիշի կատարումը պահանջում է իրականացման երկարատև ժամկետ, սահմանվում են միջանկյալ կամ փուլային նպատակային ցուցանիշներ:

5. Սույն հոդվածի 2-կետում նշված նպատակային ցուցանիշներին հասնելը ապահովվելու համար կողմերից յուրաքանչյուրը.

ա) ազգային կամ տեղային մակարդակով ստեղծում է իր իրավասու մարմինների աշխատանքների համակարգման մեխանիզմներ,

բ) միջսահմանային, ազգային և/կամ տեղային մակարդակով մշակում է ջրատնտեսային գործունեության կառավարման ծրագրեր, նախապատվորեն ըստ ջրհավաք տարածքների և ստորգետնյա ջրերի ներծծման գոտիների: Միաժամանակ դրանք պետք է նախատեսեն համապատասխան գործնական և/կամ ուրիշ միջոցներ թափանցիկ և արդար ձևով հասարակության մասնակցությունը ապահովելու և այդ մասնակցության արդյունքների պատշաճ հաշվառելու համար: Այդպիսի ծրագրերը կարող են հանդիսանալ սույն հոդվածում նշված նպատակային ցուցանիշներին հասնելուն օժանդակող առաջարկությունների և կատարման ժամկետների վերաբերյալ հասարակության լիարժեք տեղեկատվությունը ապահովող այլ համապատասխան ծրագրերի կամ փաստաթղթերի բաղկացուցիչ մասեր,

գ) ստեղծում և ապահովում է խմելու ջրի որակի ստանդատների հսկողության և պահպանման իրավական և կազմակերպչական հիմքերը,

դ) ստեղծում և ապահովում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված նպատակային ցուցանիշներին առնչվող այլ նորմերի և արդյունավետության մակարդակների հսկողության, դրանց հասնելուն օժանդակող և, անհրաժեշտության դեպքում, ապահովող մեխանիզմներ, ներառյալ իրավական և կառուցվածքային ,



## Հոդված 7

### ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմ իրականացնում է հետևյալ տվյալների հավաքումը և գնահատումը, որոնք վերաբերվում են

ա) հոդված 6-ի կետ 2-ում նշված նպատակային ցուցանիշներին հասնելու առաջընթացին,

բ) ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելմանը, սահմանափակմանը և նվազեցմանը այդ առաջընթացի նպաստելու չափը գնահատող ցուցանիշներին,

2. Յուրաքանչյուր Կողմ պարբերաբար հրապարակում է իր կողմից անցկացվող տվյալների հավաքման և գնահատման արդյունքները: Հրապարակման հաճախականությունը սահմանվում է Կողմերի Խորհրդակցության որոշմամբ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է այդ տվյալների հավաքման նպատակով վերցված ջրի և կեղտաջրերի փորձանմուշների հետազոտման արդյունքների մատչելիությունը հասարակության համար,

4. Վերընշյալ տվյալների հավաքման և գնահատման հիման վրա յուրաքանչյուր Կողմ պարբերաբար կատարում է նպատակային ցուցանիշներին հասնելու առաջընթացի ամփոփում: Այդ ամփոփումների պարբերականությունը սահմանվում է Կողմերի Խորհրդակցության որոշմամբ: Սույն կետում նշված ամփոփումները ներառում են հոդված 6-ի կետ 2-ով սահմանված նպատակային ցուցանիշների ամփոփումը՝ գիտական և տեխնիկական գիտելիքների հիման վրա դրանք բարելավելու տնասկետից, առանց սահմանափակելու հոդված 6-ի կետ 2-ի համաձայն ավելի հաճախ ամփոփումներ անցկացնելու հնարավորությունը,

5. Յուրաքանչյուր Կողմ հոդված 17-ում նշված Քարտուղարությանը ներկայացնում է հավաքված և վերլուծված տվյալներով և առաջընթացի գնահատմամբ համառոտ զեկուցում՝ այլ Կողմերի միջև տարածելու համար: Այդ զեկուցումը պետք է համապատասխանի Կողմերի Խորհրդակցությամբ սահմանված ուղեցույցին: Այդ ուղեցույցը պետք է նախատեսի սույն նպատակի համար այլ միջազգային

Ֆորումների համար նախապատրաստված և համապատասխան լրատվություն պարունակող զեկուցումների օգտագործման հնարավորությունը:

6. Կողմերի Խորհրդակցությունը սույն Արձանագրության իրականացման առաջընթացը գնահատում է այդպիսի ամփոփ զեկուցումների հիման վրա:

## Հոդված 8

### ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ (ՀԱԿԱԶԴՄԱՆ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Կողմերից յուրաքանչյուրը պատշաճ կերպով ապահովում է.

ա) հսկողության և վաղաժամ նախազգուշական ազգային և/կամ տեղական համալիր համակարգերի ստեղծումը, կատարելագործումը և սպասարկումը հետևյալ նպատակներով.

- ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների կամ առանձին դեպքերի կամ այդպիսի բռնկումների և դեպքերի արտահայտված վտանգի հայտնաբերում, այդ թվում ջրի աղտոտման կամ արտակարգ եղանակային երևույթների պատճառով առաջացող,
- այդպիսի բռնկումների, դեպքերի կամ սպառնալիքի մասին համապատասխան պետական մարմինների արագ և հստակ ծանուցում,
- ջրի հետ կապված հիվանդություններից մարդկանց առողջությանը անխուսափելի վտանգի դեպքում բնակչությանը պետական մարմինների տրամադրության տակ գտնվող այդ վնասը կանխելու կամ նվազեցնելու միջոցներ ձեռնարկելուն օժանդակող լիարժեք տեղեկատվության տրամադրում,
- շահագրգիռ պետական մարմիններին, համապատասխան դեպքերում նաև հասարակությանը, կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում,

բ) այդպիսի բռնկումների և դեպքերի առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքերում ազգային և տեղական արձագանքման անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերի մանրակրկիտ և ժամանակին պատրաստում ,

գ) այդպիսի բռնկումներին, դեպքերին և դրանց առաջացման սպառնալիքի հետ կապված իրավիճակներին արձագանքելու համար համապատասխան պետական մարմիններին անհրաժեշտ հնարավորությունների տրամադրում՝ համաձայն անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերի,

2. Ջրի հետ կապված հիվանդությունների առաջացման հսկողության և վաղաժամ նախազգուշացման համակարգերը, այդպիսի իրավիճակներում անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերը և արձագանքելու հնարավորությունները կարող են համակցվել այլ բնագավառների համանման մեխանիզմների հետ:

3. Արձանագրության Կողմի կարգավիճակ ստանալուց հետո 3 տարվա ընթացքում յուրաքանչյուր Կողմ ապահովում և կիրարկում է սույն հոդվածի 1 կետում նշված հսկողության և վաղաժամ նախազգուշացման համակարգերը, անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերը և արձագանքելու հնարավորությունները:

## **Հոդված 9**

### **ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՅՈՒՄ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

1. Կողմերը ձեռնարկում են բնակչության բոլոր խմբերի իրազեկության բարձրացման միջոցներ

ա) ջրային տնտեսության կառավարման և հասարակական առողջության և դրանց փոխադարձ կապի կարևորության,

բ) ջրի նկատմամբ մասնավոր և հանրային իրավունքով ամրագրված ֆիզիկական և իրավական անձանց և կազմակերպությունների իրավունքների և լիազորությունների, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորում, ինչպես նաև ջրային միջավայրի և

ջրային ռեսուրսների պահպանմանն աջակցելու դրանց բարոյական պարտավորությունների վերաբերյալ:

2. Կողմերը նպաստում են.

ա) ջրատնտեսական գործունեության կառավարման, ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների պատասխանատու անձանց իրենց աշխատանքի հասարակական առողջությանը վերաբերվող ասպեկտների գիտակցմանը,

բ) հասրակական առողջության պատասխանատու անձանց ջրատնտեսական գործունեության կառավարման, ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների հիմնական սկզբունքների գիտակցմանը:

3. Կողմերը խրախուսում են ջրային ռեսուրսների կառավարման, ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների համակարգերի շահագործման համար անհրաժեշտ մասնագիտական և տեխնիկական անձնակազմի ուսուցումը և նախապատրաստումը, ինչպես նաև նրանց վերապատրաստումը և գիտելիքների և ունակությունների կատարելագործումը: Այս ուսուցումը և նախապատրաստումը պետք է ընդգրկեն հասրակական առողջության համապատասխան ասպեկտները:

4. Կողմերը խրախուսում են.

ա) ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման բնագավառում գիտական հետազոտությունների անցկացումը և ծախսաարդյունավետ մեթոդների և միջոցների մշակումը,

բ) ջրի և առողջության բնագավառում երկարատև միտումների (տեխնոլոգիաների), ներկա անհանգստացնող գործոնների, անցյալում ծագած խնդիրների և դրանց հաջող լուծումների մասին տվյալներ մշակող համապարփակ տեղեկատվական համակարգերի մշակումը և այդ տեղեկատվությանը իրավասու մարմիններին տրամադրումը:

**Հոդված 10**

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

1. Որպես լրացում սույն Արձանագրության պահանջներին՝ կոնկրետ տեղեկատվություն կամ փաստաթղթեր կողմերի հրապարակելու վերաբերյալ, յուրաքանչյուր կողմ իր օրենսդրության սահմաններում միջոցներ է ձեռնարկում հասարակությանը պետական մարմիններում առկա տեղեկատվության տրամադրելու ուղղությամբ, որն ողջամտորեն անհրաժեշտ է հետևյալ հարցերի լայն քննարկման համար

ա) հոդված 6-ի համաձայն նպատակային ցուցանիշների և դրանց կատարման հսկողական ժամկետների սահմանում և ջրատնտեսային գործունեության կառավարման ծրագրերի ընդունում,

բ) հոդված 8-ի համաձայն հսկողության և վաղաժամ նախագուշացման համակարգերի և անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերի մշակում, վերանայում և կիրարկում,

գ) հոդված 9-ի համաձայն հասարակության իրազեկության, ուսուցման, նախապատրաստման, գիտական հետազոտությունների, զարգացման և տեղեկատվության նպաստում:

2. Յուրաքանչյուր կողմ ապահովում է պետական մարմինների կողմից սույն Արձանագրության կատարմանը վերաբերվող լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հարցմանն ի պատասխան ողջամիտ ժամկետներում և ազգային օրենսդրության սահմաններում հասարակությանը այդպիսի տեղեկատվություն տրամադրումը:

3. Կողմերն ապահովում են հոդված 7-ի 4 կետում և սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվության հետ հասարակության ողջամիտ ժամկետներում անվճար ծանոթանալու հնարավորությունը և տրամադրում են գործնական հնարավորություններ հասարակության ներկայացուցիչներին այդ լրատվության պատճենը ողջամիտ վճարով կողմերից ստանալու համար:

4. Ոչինչ Սույն Արձանագրությանում չի պահանջում պետական մարմնից հրապարակել կամ հասարակությանը տրամադրել տեղեկատվություն, եթե՝

ա) պետական մարմինը այդ տեղեկատվությունն իր տրամադրության տակ չունի,

բ) տեղեկատվություն տրամադրելու մասին խնդրանքը ակնհայտորեն անհիմն է կամ ձևակերպված է շատ ընդհանուր ձևով, կամ

գ) տեղեկատվությունը վերաբերվում է մշակման եզրափակիչ փուլում գտնվող նյութերին կամ պետական մարմինների ներքին գրագրությանը, երբ այդպիսի բացառությունը նախատեսված է ազգային օրենսդրությամբ կամ կայացված պրակտիկայով՝ հաշվի առնելով այն տարածելու հասարակության հետաքրքրվածությունը:

5. Ոչինչ Սույն Արձանագրությանում չի պահանջում պետական մարմնից տեղեկատվություն հրապարակել կամ տրամադրել հասարակությանը, եթե դրա հրապարակումը կարող է բացասաբար ազդել.

ա) պետական մարմինների աշխատանքի գաղտնիության վրա այն դեպքերում, երբ այդ գաղտնիությունը նախատեսված է ազգային օրենսդրությամբ,

բ) միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ ազգային անվտանգության վրա,

գ) արդարադատության իրականացման, անձանց արդար դատաքննության ստանալու հնարավորության կամ պետական մարմինների քրեական կամ կարգապահական հետաքննություն իրականացնելու հնարավորության վրա ,

դ) առևտրական կամ արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության վրա այն դեպքերում, երբ այդ գաղտնիությունը պաշտպանված է օրենքով օրինական տնտեսական շահերը պաշտպանելու նպատակով: Այդ սահմաններում պետք է հրապարակվի շրջակա միջավայրի պահպանմանը վերաբերվող արտանետումների և արտահոսքերի մասին տեղեկատվությունը,

ե) ինտելեկտուալ սեփականության /հեղինակային/ իրավունքների վրա,

զ) ֆիզիկական անձին վերաբերվող անձնական տվյալների և/կամ արխիվների գաղտնիության վրա, այն դեպքերում, երբ այդպիսի գաղտնիությունը նախատեսվում է ազգային օրենսդրությամբ և համապատասխան անձը համաձայնություն չի տվել այդ տեղեկատվությունը հասարակությանը տրամադրելուն ,

է) երրորդ Կողմի շահերի վրա, եթե խնդրված տեղեկատվությունը տրամադրող Կողմը չունի կամ նրան չի կարող պարտադրվել այդպիսի իրավական պարտավորություն և այն համաձայնություն չի տալիս համապատասխան նյութի հրապարակման համար,

ը) շրջակա միջավայրի վրա, որին վերաբերվում է այդ տեղեկատվությունը, օրինակ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերը:

Մերժման վերը նշված հիմքերը պետք է դիտել սահմանափակորեն՝ հաշվի առնելով հասարակության հետաքրքրվածությունը այդ տեղեկատվության հրապարակման հարցում, ինչպես այն բանին վերաբերվում է արդյոք խնդրված տեղեկատվությունը շրջակա միջավայր արտանետումներին և արտահոսքերին:

## **Հոդված 11**

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ**

Կողմերը համագործակցում և անհրաժեշտության դեպքում օգնում են իրար.

ա) սույն Արձանագրության նպատակներին աջակցող միջազգային գործողություններ իրականացնելու,

բ) ի կատարումն սույն Արձանագրության ազգային և տեղական ծրագրեր իրականացնելու՝ համապատասխան խնդրանքի առկայության դեպքում:

## **Հոդված 12**

### **ՀԱՄԱՏԵՂ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՐԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նոդված 11 ա) ենթակետի համապատասխան կողմերը նպաստում են այնպիսի միջազգային գործողությունների իրականացման համագործակցությանը , որոնք վերաբերվում են.

ա) հոդված 6-ի կետ 2-ում նշված հարցերի վերաբերյալ համատեղ համաձայնեցրած նպատակային ցուցանիշների մշակմանը,

բ) հոդված 7-ի բ) կետի նպատակների համար ցուցանիշների մշակմանը՝ ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման կամ նվազեցման գործողությունների արդյունավետությունը լուսաբանելու նպատակով,

գ) հոդված 8-ի համաձայն ազգային համակարգերի սահմաններում կամ դրանց ի լրացումն հսկողության և վաղաժամ նախազգուշացման համատեղ կամ համաձայնեցված համակարգերի, գործողությունների համալիր ծրագրերի և արձագանքելու հնարավորությունների ստեղծմանը՝ ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների և դեպքերի առաջացման կամ դրանց սպառնալիքին արձագանքման նպատակով, հատկապես ջրի աղտոտման կամ արտակարգ եղանակային երևույթների պատճառով,

դ) ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների և դեպքերի առաջացման կամ այդպիսի բռնկումների և դեպքերի սպառնալիքին արձագանքման բնագավառում փոխադարձ օգնությանը, հատկապես ջրի աղտոտման կամ արտակարգ եղանակային երևույթների պատճառով,

ե), տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև տեխնիկական և իրավական գիտելիքների և փորձի փոխանակման համապարփակ տեղեկատվական համակարգերի և տվյալների բազաների մշակմանը,

զ) մեկ կողմի իրավասու մարմինների կողմից մյուս կողմի համապատասխան մարմինների օգնությամբ և հստակ ծանուցմանը , եթե այն կարող է ենթարկվել՝

- ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների կամ առանձին դեպքերի առաջացման,
- հայտնաբերված բռնկումների և դեպքերի արտահայտված վտանգին,



է) ջրի հետ կապված հիվանդությունների մասին հասարակության շրջանում տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցների մասին տեղեկատվության փոխանակմանը:

### Հոդված 13

#### ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

1. Այն դեպքում, երբ որևէ Կողմեր սահմանակից են միևնույն միջսահմանային ջրերին, նրանք, ի լրացումն հոդվածներ 11 և 12-ի մեջ նշված պարտավորություններին, պետք է համագործակցեն և անհրաժեշտության դեպքում օգնեն միմյանց ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և միջսահմանային հետևանքների նվազեցման գործում:

Մասնավորապես, նրանք պետք է.

ա) միջսահմանային ջրերի և դրանց հետ կապված խնդիրների և վտանգների մասին տեղեկատվություն և գիտելիքներ փոխանակեն նույն ջրերին սահմանակցող այլ Կողմերի հետ,

բ) ձգտեն ներդնել նույն միջսահմանային ջրերին սահմանակցող այլ Կողմերի հետ համատեղ կամ համաձայնեցված ջրատնտեսային կառավարման ծրագրեր՝ համաձայն հոդված 6 կետ 5-ի, և վերահսկողության և վաղաժամ նախագուշացման համակարգեր և անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրեր՝ համաձայն հոդված 8 կետ 1-ի, ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումների և դեպքերի կամ դրանց արտահայտված սպառնալիքի դեպքում արձագանքման նպատակով, հատկապես կապված ջրի աղտոտման կամ արտակարգ եղանակային երևույթների հետ,

գ) հավասարության և փոխադարձության հիմունքներով կատարեն իրենց միջսահմանային ջրերին վերաբերվող Համաձայնությունների և այլ Պայմանավորվածությունների համաձայնեցում՝ սույն Արձանագրության սկզբունքների հետ ցանկացած հակասությունները վերացնելու և սույն Արձանագրության նպատակների վերաբերյալ իրենց փոխադարձ վերաբերմունքը և վարքը որոշելու համար,

դ) յյուրաքանչյուրի խնդրանքով միմյանց խորհրդատվություն են տրամադրում մարդու առողջության վրա ջրի հետ կապված որևէ հիվանդության հնարավոր վնասակար ազդեցության վերաբերյալ:

2. Այն դեպքում, երբ Արձանագրության համապատասխան կողմերը նաև կոնվենցիայի կողմեր են, ջրի հետ կապված հիվանդությունների միջսահմանային ազդեցություն ունեցող ցանկացած միջսահմանային հետևանքներին վերաբերող այդպիսի համագործակցությունը և օգնությունը պետք է իրականացվեն կոնվենցիայի դրույթներին համաձայն:

#### **Հոդված 14**

#### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Համաձայն հոդված 11 գ) ենթակետի ազգային և տեղական ծրագրերը կատարելու նպատակով համագործակցության և օգնության իրականացման ընթացքում կողմերը, մասնավորապես, պետք է որոշեն միմյանց հետևյալ նպատակներով լավագույնս աջակցելու ձևերը.

ա) ջրատնտեսային գործունեության կառավարման ծրագրերի միջսահմանային, ազգային և/կամ տեղական համատեսքով պատրաստում և ջրամատակարարման և սանիտարական խարզելիչ միջոցների բարելավման ուրվագծերի մշակում,

բ) այդպիսի ծրագրերի և ուրվագծերի համաձայն նախագծերի, հատկապես ինֆրակառուցվածքի զարգացմանը վերաբերվող, մշակման կատարելագործում ֆինանսավորման աղբյուրներն ավելի մատչելի դարձնելու նպատակով,

գ) այդպիսի նախագծերի արդյունավետ իրականացում,

դ) վերահսկողության և վաղաժամ նախագուշացման համակարգերի ստեղծում, անհետաձգելի գործողությունների համալիր ծրագրերի մշակում և ջրի հետ կապված հիվանդությունների առաջանալու դեպքում արձագանքման հնարավորությունների ստեղծում,

ե) սույն Արձանագրության կատարման համար անհրաժեշտ օրենսդրության մշակում,

զ) մասնագիտական և տեխնիկական հիմնական անձնակազմի ուսուցանում և նախապատրաստում,

է) գիտական հետազոտությունների իրականացում և ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման ծախսաարդյունավետ միջոցների և մեթոդների մշակում,

ը) դիտարկման արդյունավետ ցանցերի աշխատանք և ջրատնտեսական ծառայությունների արդյունավետության և աշխատանքի որակի գնահատում, տվյալների համալիր բազաների և տեղեկատվական համակարգերի զարգացում,

թ) դիտարկման երաշխավորված որակի ապահովում՝ ներառյալ միջլաբորատոր համադրությունները:

## **Հոդված 15**

### **ՊԱՀՊԱՆԱՆՄԱՆ ՔՆՆՈՒՄԸ**

Կողմերը քննում են սույն Արձանագրության դրույթների պահպանումը հոդված 7-ում նշված գնահատականների և ամփոփումների հիման վրա:

Պահպանման վերահսկման բազմակողմանի միջոցները չունեն ոչ հակադրական, ոչ դատական բնույթ, այլ խորհրդատվական բնույթի են և սահմանվում են Կողմերի առաջին Խորհրդակցության ժամանակ: Այդ միջոցները պետք է ապահովեն հասարակության պատշաճ մասնակցությունը:

## **Հոդված 16**

### **ԿՈՂՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

1. Կողմերի առաջին Խորհրդակցությունը պետք է գումարվի ոչ ուշ քան սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց 18 ամիս հետո: Հետագայում հերթական

խորհրդակցությունները գումարվում են պարբերաբար, Կողմերի սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս քան 3 տարին մեկ անգամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է սույն հոդվածի 2 կետի նպատակների կատարման համար:

Կողմերը արտահերթ խորհրդակցություններ են գումարում հերթական խորհրդակցության ժամանակ այդ մասին ընդունված որոշման կամ Կողմերից մեկի գրավոր խնդրանքի համաձայն այն պայմանով, որ այդ խնդրանքը հավանության կարժանանա ոչ պակաս քան Կողմերի մեկ երրորդի կողմից՝ բոլոր Կողմերը ծանուցելուց վեց ամսվա ընթացքում:

2. Կողմերի հերթական խորհրդակցությունները հնարավորության սահմաններում գումարվում են Կոնվենցիայի Կողմերի խորհրդակցությունների հետ միաժամանակ:
3. Կողմերը իրենց խորհրդակցությունների ընթացքում մշտապես վերահսկում են սույն Արձանագրության կատարումը և այդ նպատակով.

ա) քննության են առնում ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման քաղաքականության և մեթոդոլոգիական մոտեցումները, աջակցում են դրանց համաձայնեցմանը և ամրապնդում են միջսահմանային և միջազգային համագործակցությունը՝ 11, 12, 13 և 14 հոդվածների համաձայն,

բ) Կողմերի ներկայացրած տեղեկատվության հիման վրա համաձայն Կողմերի խորհրդակցությամբ սահմանված ուղեցույցների գնահատում են սույն Արձանագրության կատարման առաջընթացը: Այդ ուղեցույցները պետք է բացառեն տեղեկատվությունը տրամադրելու աշխատանքների կրկնությունը,

գ) տեղեկացվում են Կոնվենցիայի իրականացման գործում առաջընթացի մասին,

դ) տեղեկատվություն են փոխանակում Կոնվենցիայի Կողմերի խորհրդակցության հետ և քննարկում համատեղ գործողությունների հնարավորությունը,

ե) անհրաժեշտության դեպքում դիմում են Եվրոպական տնտեսական հանձնաժողովի և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային կոմիտեի ծառայություններին,

զ) որոշում են սույն Արձանագրության նպատակներին հասնելուն ուղղված խորհրդակցություններին և գործունեության այլ տեսակներին այլ շահագրգիռ միջազգային կառավարական և ոչ կառավարական մարմինների մասնակցելու պայմանները,

է) քննարկում են սույն Արձանագրության սահմաններում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման և դատական և վարչական կարգով վերանայման ընթացքում հասարակայնության մասնակցության ուղղությամբ հետագա միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը,՝ հաշվի առնելով այդ հարցերի վերաբերյալ ուրիշ միջազգային ֆորումներում ձեռք բերված փորձը,

ը) մշակում են սույն Արձանագրության և Կոնվենցիայի համաձայն համատեղ իրականացվող աշխատանքների ծրագիր, ներառյալ նախագծերը, և սահմանում են այս աշխատանքի ծրագիրը կատարելու համար անհրաժեշտ ցանկացած մարմիններ,

թ) քննարկում և ընդունում են սույն Արձանագրության դրույթները կատարելուն աջակցող ուղեցույցներ և հանձնարարություններ,

ժ) առաջին խորհրդակցությանը քննարկում և համաձայնության ձևով ընդունում են խորհրդակցությունների ընթացակարգի կանոնները,

ի) քննարկում և ընդունում են սույն Արձանագրության լրացումների վերաբերյալ առաջարկություններ,

լ) քննարկում և իրականացնում են ցանկացած լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են պահանջվել սույն Արձանագրության կատարման համար:

## Հոդված 17

**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ**

1. Եվրոպական տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարը և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ղեկավարը կատարում են սույն Արձանագրության հետ կապված հետևյալ քարտուղարական գործողությունները.

ա) գումարում և պատրաստում են Կողմերի խորհրդակցությունները,

բ) Կողմերին են փոխանցում սույն Արձանագրության դրույթներին համաձայն ստացված զեկուցումները և այլ տեղեկատվություն,

գ) իրականացնում են առկա ռեսուրսների հիման վրա Կողմերի խորհրդակցությամբ որոշված այլ գործողություններ,

2. Եվրոպական տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարը և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ղեկավարը .

ա) փոխըմբռնման Մեմորանդումով մանրամասնորեն սահմանում են իրենց գործառույթների տարանգատման մեխանիզմները և համապատասխանաբար տեղեկացնում են այդ մասին Կողմերի խորհրդակցությանը,

բ) Կողմերին են հայտնում հոդված 16-ի կետ 3-ում նշված աշխատանքային ծրագրի կատարման տարրերի և պայմանների մասին:

## Հոդված 18

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Յանկացած Կողմ կարող է առաջարկել սույն Արձանագրության լրացումներ:

2. Սույն Արձանագրության լրացումների մասին առաջարկությունները քննարկվում են Կողմերի Խորհրդակցության ընթացքում:
3. Սույն Արձանագրության վերաբերյալ ցանկացած առաջարկվող լրացման տեքստը գրավոր ձևով ներկայացվում է քարտուղարություն, որը բոլոր Կողմերին ծանուցում է ոչ ուշ, քան այդ լրացման ընդունման համար նախատեսված Խորհրդակցության սկզբից 90 օր առաջ:
4. Սույն Արձանագրության լրացումը ընդունվում է Խորհրդակցությանը մասնակցող Կողմերի ներկայացուցիչների համաձայնության ձևով: Ընդունված ուղղումը քարտուղարության կողմից ուղարկվում է ավանդատուին, որն այն տարածում է բոլոր Կողմերի միջև՝ ընդունման համար: Ուղղումն ընդունած Կողմերի համար այն ուժի մեջ է մտնում այդ ուղղումն ընդունելու մասին փաստաթղթերը Կողմերի 2/3-ի ավանդատուին հանձնելու օրվանից 90 օր հետո: Ցանկացած այլ Կողմի համար ուղղումն ուժի մեջ է մտնում այդ Կողմի ուղղումն ընդունելու մասին փաստաթղթերը պահպանման հանձնելու օրվանից 90 օր հետո:

### **Հոդված 19**

#### **ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ**

1. Յուրաքանչյուր Կողմն ունի մեկ ձայն, բացառությամբ սույն հոդվածի 2 կետում նշված դեպքերի,
2. Տնտեսական ինտեգրացման տարածքային կազմակերպություններն իրենց իրավասության սահմաններում իրենց ձայնի իրավունքն իրականացնում են իրենց Կողմեր հանդիսացող անդամ-պետությունների թվին հավասար ձայների քանակով: Այդպիսի կազմակերպությունները կորցնում են ձայնի իրավունքը այն դեպքում, երբ դրանց անդամ-պետություններն իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և ճիշտ հակառակը:

### **Հոդված 20**

#### **ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**

1. Սույն Արձանագրության մեկնաբանման և կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի կողմերի միջև վեճի առաջացման դեպքում դրանք պետք է ձգտեն այդ վեճի կարգավորմանը բանակցությունների կամ ցանկացած այլ, վիճող կողմերի համար ընդունելի միջոցով:
2. Սույն Արձանագրության ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման ժամանակ կամ նրան միանալու դեպքում կամ դրանից հետո ցանկացած պահին ցանկացած կողմը կարող է գրավոր ձևով հայտնել Դեպոզիտորին, որ սույն հոդվածի 1 կետի համաձայն չկարգավորված վեճի վերաբերյալ այն ընդունում է վեճերի կարգավորման հետևյալ միջոցներից մեկը՝ որպես պարտադիր միջոց ցանկացած կողմի համար, որն ընդունում է նույն պարտավորությունը.

ա) վեճի կարգավորումը կոնվենցիայի դրույթներին համաձայն՝ եթե վեճը ծագել է կոնվենցիայի վերաբերյալ, այն դեպքում, երբ Արձանագրության կողմերը հանդիսանում են կոնվենցիայի կողմեր և համաձայնել են իրենցից յոթաբանչյուրի համար պարտադիր համարել վեճի կարգավորման կոնվենցիայում նախատեսված միջոցներից մեկը կամ երկուսն էլ,

բ) վեճի ներկայացումը Միջազգային Դատարանին՝ եթե կողմերը չեն համաձայնվել արբիտրաժի կամ վեճի կարգավորման ցանկացած այլ ձևի մասին:

## Հոդված 21

### ՄՏՈՐԱԳՐՈՒՄ

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար 1999թ. հունիսի 17-ից Լոնդոնում նախարարների մակարդակով անցկացվելիք «Շրջակա միջավայր և առողջություն» երրորդ կոնֆերանսի առիթով, հետագայում Միացյալ Ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում Նյու-Յորքում մինչև 2000թ. հունիսի 18-ը Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների համար, ԱՀԿ-ի Եվրոպական տարածքային կոմիտեի անդամ-պետությունների համար, Տնտեսական և Սոցիալական Խորհրդի 1947թ. մարտի 28-ի 36 (IV) բանաձևի 8 կետի համաձայն Եվրոպական տնտեսական հանձնաժողովում խորհրդատվական



կարգավիճակ ունեցող պետությունների համար,, ինչպես նաև Եվրոպական տնտեսական հանձնաժողովի և ԱՀԿ-ի Եվրոպական տարածքային կոմիտեի անդամ-անկախ պետությունների կողմից ստեղծված տնտեսական ինտեգրացման տարածքային կազմակերպությունների համար,որոնց իրենց անդամ-պետությունները լիազորություններ են տրամադրել սույն Արձանագրությամբ կարգավորվող հարցերի վերաբերյալ՝ այդ հարցերին վերաբերվող պայմանագրերի կնքման լիազորություններն ներառյալ:

## Հոդված 22

### ՎԱՎԵՐԱՑՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ՄԻԱՑՈՒՄ

1. Սույն Արձանագրությունը ենթակա է այն ստորագրած պետությունների և տնտեսական ինտեգրացիայի տարածքային կազմակերպությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման:
2. Սույն Արձանագրությունը բաց է միացման համար հոդված 21 նշված պետությունների և կազմակերպությունների համար:
3. Հոդված 21-ում նշված կազմակերպություններից յուրաքանչյուրը, որը դառնում է կողմ այդ կազմակերպության անդամ-պետություններից ոչ մեկի կողմ չհանդիսանալու դեպքում, կապված է Արձանագրությամբ նախատեսված բոլոր պարտավորություններով: Եթե այդպիսի կազմակերպությունների անդամ-պետություններից սույն Արձանագրության կողմ են հանդիսանում մեկը կամ մի քանիսը, ապա տվյալ կազմակերպությունը և իր անդամ-պետությունները որոշում են ընդունում սույն Արձանագրությանն համաձայն իրենց պարտավորությունները կատարելու համապատասխան պարտականությունների մասին: Այդպիսի դեպքերում տվյալ կազմակերպությունը և անդամ-պետությունները չեն կարող միաժամանակ օգտագործել սույն Արձանագրությամբ նախատեսված իրենց իրավունքները:
4. 21 հոդվածում նշված տնտեսական ինտեգրացիայի տարածքային կազմակերպությունները սույն Արձանագրության վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իրենց փաստաթղթերում հայտնում են սույն Արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրավասության սահմանների

մասին: Դրանք Դեպոզիտարիին տեղեկացնում են նաև իրենց իրավասության սահմանների ցանկացած էական փոփոխության մասին:

5. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթղթերը պահպանման համար պետք է հանձնվեն Միացյալ Ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

### **Հոդված 23**

#### **ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին տասնվեցերորդ փաստաթղթի հանձնումից 90 օր հետո:
2. Սույն հոդվածի կետ 1-ի նպատակների համար տնտեսական ինտեգրացիայի տարածքային կազմակերպության ցանկացած հանձնվող փաստաթուղթ չպետք է դիտարկվի որպես այդ կազմակերպության անդամ-պետությունների կողմից հանձնված փաստաթղթերի լրացում:
3. 21 հոդվածում նշված յուրաքանչյուր պետության կամ կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում կամ հաստատում է սույն Արձանագրությունը վավերացման, ընդունման, հաստատման և միացման մասին տասնվեցերորդ փաստաթուղթը հանձնելուց հետո, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ պետության կամ կազմակերպության կողմից իր վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթղթի հանձնումից 90 օր հետո:

### **Հոդված 24**

#### **ԵԼՔ**

Ցանկացած կողմի համար սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո ցանկացած պահին այդ կողմը կարող է Արձանագրությունից դուրս գալ՝ զրավոր ձևով տեղեկացնելով Դեպոզիտորին:

Ցանկացած այդպիսի ելք ուժի մեջ է մտնում Դեպոզիտորին ծանուցելու օրից 90 օր հետո:

## **Հոդված 25 ԴԵՊՈԶԻՏԱՐԻ**

Սույն Արձանագրության Դեպոզիտարին Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարն է:

## **Հոդված 26 ՎԱՎԵՐԱԿԱՆ ՏԵՔՍԵՐ**

Սույն Արձանագրության բնագիրը, որի անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը վավերական են, հանձնվում է Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆ ԻՆՉԻ ներքո ստորագրյալները, դրան պատշաճ լիազոր լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Լոնդոնում հազար ինը հարյուր իննսուն ինը թվականի հունիսի տասնյոթին:

Միջազգային նախաձեռնության անհրաժեշտությունը ջրի և առողջության խնդիրների վերաբերյալ որոշված էր շրջակա միջավայրի և առողջապահության Եվրոպական կոմիտեի կողմից 1996թ.: 1997թ. ԱՀԿ-ն կազմակերպեց փորձագետների խորհրդատվական խորհրդակցություն, որը հանձնարարեց այդ հարցի վերաբերյալ իրավականորեն պարտադիր փաստաթուղթ պատրաստել: Նույնպես 1997թ. կոմիտեն ԱՀԿ-ին և ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովին առաջարկեց պատրաստել առաջարկություններ նախարարների մակարդակով շրջակա միջավայրի և առողջության պահպանության Երրորդ կոնֆերանսի համար, իսկ Հունգարիան համաձայնվեց հանդիսանալ այդ պատրաստման համար պատասխանատու երկիր:

Խմբագրային խումբը ստեղծվեց 1997 թվականին: ԱՀԿ-ի Եվրոպական տարածքի անդամ-պետությունների, Միացյալ Ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական կոմիտեի միջկառավարական խորհրդատվական խորհրդակցության ժամանակ որոշում ընդունվեց Միացյալ Ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի միջազգային լճերի և միջսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին կոնվենցիային կից Արձանագրություն մշակել: Տեքստի մշակումը եզրափակելու համար կազմակերպվեցին ևս երկու միջկառավարական խորհրդակցություններ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որից յուրաքանչյուրը նախորդվեց խմբագրային խմբի խորհրդակցություններով: Ցանկացողները կարող են ստանալ ջրի և առողջության խնդիրների վերաբերյալ մենագրությունը, որը պատրաստված է Միացյալ Ազգերի կազմակերպության և շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության կողմից, որը պետք է դիտարկել որպես ելակետային փաստաթուղթ: